

Ռուզաննա Առաքելեան

Ծնունդ է 1959թ. Փետրուարի 15-ին:



1982թ. աւարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական բաժինը: Բանասէր, հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ:

1991-1994թթ. աշխատել է «Երկիր» օրաթերթում՝ որպէս բաժնի վարիչ: 1998 թուականից աշխատում է ՀՀ հանրային ձայնասփիւռում, ղեկավարում «Կամուրջ» ստեղծագործական ծրագիրը:

1989 թուականից Հայաստանի Լրագրողների Միութեան անդամ է, մէկ գրքի եւ բազմաթիւ յօդուածների հեղինակ:

2007թ. Մայիսի 12-ին Ազգային ժողովի պատգամաւոր է ընտրուել համամասնական ընտրակարգով ՀՅԴ կուսակցութիւնից:

Ամուսնացած է, ունի մէկ երեխայ: